## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Մեծամոր համայնքի թիվ 3 մանկապարտեզի հիմնանորոգման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների կատարման ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/62 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի նոյեմբերի 30-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/62-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2025 թվականի դեկտեմբերի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Համադրման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կատարել նախատեսված աշխատանքների ծավալների և գնի նվազեցում:

**Փոփոխության նկարագրություն՝** Պայմանագրի շրջանակում 2025 թվականի դեկտեմբերի 15-ին կատարված փոփոխությունների արդյունքում.

1. Պայմանագրի 5.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 434,508,894.00 (չորս հարյուր երեսունչորս միլիոն հինգ հարյուր ութ հազար ութ հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ, որից 72,418,149.00 (յոթանասուներկու միլիոն չորս հարյուր տասնութ հազար մեկ հարյուր քառասունինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»:
2. Պայմանագրի Հավելված 1-ով ներկայացված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» աղյուսակի «Ընդհանուր գումար/ ՀՀ դրամ» սյունակում նշված «451,440,000.00» թիվը փոփոխվել է «434,508,894.00» թվով:
3. Պայմանագրի Հավելված 1.1-ով, 2023 թվականի մարտի 17-ին կնքված Համաձայնագիր N 1-ի Հավելված N 2-ով և 2023 թվականի սեպտեմբերի 18-ին կնքված Համաձայնագիր 2-ի Հավելված N 1-ով հաստատված «ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ»-ի փոխարեն հաստատվել է համաձայնագիր 4-ի Հավելված 1-ով ներկայացվող տարբերակը:
4. Պայմանագրի, 2023 թվականի մարտի 17-ին կնքված Համաձայնագիր N 1-ի, 2023 թվականի սեպտեմբերի 18-ին կնքված Համաձայնագիր 2-ի և 2024 թվականի հունիսի 5-ին կնքված Համաձայնագիր 3-ի «Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները» բաժնում նշված Մեծամորի համայնքապետարանի հասցեն այսուհետ կարդալ «ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր, Վարչական կենտրոն 4»:

**Փոփոխության հիմնավորում՝** Պայմանագրի կատարման շրջանակում համադրման արդյունքում կատարվող աշխատանքների և ծավալների նվազեցման անհրաժեշտությունը և Պայմանագրի 8.5 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**